տարներն են եղել Մինաս Խուլիյանը և նույպար Պալիկյանը։

«Սեան», 1 սեպտեմբերի

Ա Մ Ն

Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի աշխատակիցներ Ե. Սարգսյանի և Ռ. Սահակյանի «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» աշխատությունը լույս է տեսել անգլերեն՝ Բոստոնի համալսարանի պրոֆեսոր Եղիշե Չրաքյանի թարգմանությամբ։

«Աշխարհ», 10 հուլիսի

Նյու-Յորքում տեղի հայերի կողմից պատրաստվել է մեծ եղեռնը պատկերող «Քրքիջ կենոսայտ ավ թիր Արմենիենեդ» անունով վավերական ու պատմական կինոնկարը՝ անգլերեն, հայերեն և արաբերեն տարբերակներով։ Երաժշտությունը՝ Ֆոստոնի «Կոմիտաս» երգչախմբի՝ Ռուբեն Գրիգորյանի ղեկավարությամբ։

«Ջահակիր», 29 հուլիսի

Նյու-Յորքի «Հարրի Ապրահամս» հրատարակչությունը անգլերեն լույս է ընծայել Սովետական Հայաստանի անվանի արվեստագետ Լ. Դուբնովոյի «Հայկական մանրանկարչությունը»։ Գիրքը թարգմանված է ֆրանսերենից, որը լույս էր տեսել Փարիզում դեռևս 1960 թ.։ Գրքի ֆրանսերեն թարգմանության առաջաբանը գրել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Սիրարփի Տեր-Ներսեսյանը։ Այդ նույն առաջաբանը թարգմանվածկցված է անգլերեն հրատարակությանը։

«Նոր կյանք», 17 սեպտեմբերի

Հյուսիսային Ամերիկայում Ջոն Քյուրքճյանը և Մայքլ Հակոբյանը ստեղծել են «Ուր է իմ ժողովուրդը» կինոնկարը՝ նվիրված մեծ եղեռնի հիսնամյակին։

«Զարթոնք», 23 սեպտեմբերի

Լոս Անջելոսի Հայ կրթական տան վարչությունը և նրան օժանդակ Տիկնանց միությունը վերաբացել են տարիներ առաջ ստեղծված հայկական գրադարանը։

«Լրաբեր», 16 նոյեմբերի

Ամերիկահայ Ազգային խորհրդի Դետրոյտի մարմնի նախաձեռնությամբ և հայրենասեր կազմակերպությունների ու հայրենակցական միությունների մասնակցությամբ նոյեմբերի 21-ին տոնվել է Սովետական Հայաստանի 45-րդ տարեդարձը։

«Լրաբեր», 7 դեկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ 100 ՏԱՐՈՒՄ

Լրացավ եգիպտահայ առաջին պարբերականի՝ «Արմավենիա»-ի լույս ընծայման 100 տարին։ Այն լույս է տեսել 1865 թ. մարտի 16-ին։ Նրա խմբագիրը՝ Աբրահամ Մուրատյանը, նշանավոր դեմք է հայ լրագրության պատմության մեջ։ Դեռ 1850 թ. նա մեծ զրկանքներով և տանջանքներով հրատարակել է Նիկոմեդիայի առաջին լրագիրը՝ «Հայրենասեր»-ը, իսկ 1855 թ. Փարիզում լույս է ընծայել «Փարիզ» անունով թերթը։ Եգիպտոսում մի քանի տարի «Արմավենիա»-ն հրատարակելուց հետո, հիվանդության պատճառով, Ա. Մուրատյանը ստիպված անցել է Կ. Պոլիս, ուր որոշ ժամանակ խմբագրել է Հար. Սվաճյանի «Մեղու»-ն։

Եգիպտահայ լրագրության 100-ամյակի առիթով այստեղ տալիս ենք այդ ժամանակվա ընթացքում Եգիպտոսում լույս տեսած ավելի քան 90 հայ պարբերականների ցուցակը։ Հնարավոր է, որ լինեն նաև մեր տեսադաշտից վրիպածներ։ Սակայն չնայած իր որոշ թերություններին, այս ցուցակը մինչև հիմա լույս տեսածների մեջ ամենից ընդարձակն է։

Արմավենի։ Լրագիր կիսամսյա, քաղաքական, ազգային և բանասիրական։ Խմբագիր՝ Աբրահամ Մուրատյան։ Կահիրե, 1865, 4 էջ։

Նեղոս։ Շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Անտոն Ռշտունի։ Աղեքսանդրիա, 1888—1889, 4 էջ։

Փարոս։ Եռօրյա լրագիր, գրական, զավեշտական։ Խմբագիր-տնօրեն՝ Հ. Ալփիար և Տ. Արփիարյան։ Կահիրե, 1896—1898 (նաև 1901—1902)։

Արշալույս։ Գրական և քաղաքական անկախ հայաթերթ, օրգան Ազգային անկախ միության։

Խմբագիր՝ Ե. Թորոսյան։ Կահիրե, 1899—1905 և 1901—1914, 4 էջ։

Նոր օր։ Լրագիր ազգային, բանասիրական և քաղաքական։ Սեփականություն Ազգային ընթերցասրահի։ Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ, ապա՝ Ս. Փափազյան։ Կահիրե, 1900—1901, 4 էջ։

Փյունիկ։ Կիսամսյա հանգես ազգային, գրական և քաղաքական։ Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ։ Կահիրե, 1899—1900։ Աղեքսանդրիա, 1901—1903, 16 էջ։ (Հետագայում լույս է տեսել նաև Կ. Պոլսում)։

Ազատ խոսք։ Ամսագիր, հետագայում շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Երվ. Օտյան։ Աղեքսանդրիա, 1902—1908։ 1901 թ. հրատարակվել է Փարիզում։

Հայելի։ Հանդես ազգային, գավեշտական շաբաթաթերթ։ Խմբագիր-տնօրեն՝ Տիգրան Փափազյան։ Աղեքսանդրիա, 1903—1904, 8 էջ։ Լույս է տեսել նաև Վառնայում 1897—1903։

Արտեմիս։ Ամսահանդես ընտանեկան և գրական։ Օրգան բսաներորդ դարի հայ կանանց։ Հիմնադիր տեր-տնօրեն և խմբագիր՝ Մարի Պեյլերյան։ Կահիրե, 1902—1903։

Ազատ բեմ։ Շաբաթաթերթ գրական, գիտական, ազգային և քաղաքական։ Խմբագիր՝ Օրվանդ Օտյան, ապա՝ Բարսեղ Օհանյան, Օնիկ Թաշճյան և Լևոն Լարենց։ Աղեքսանդրիա, 1903—1905, Կահիրե, 1906—1907, 4 էջ։

Ժողովուրդ։ Ամսաթերթ քննասիրական։ Տեր և տնօրեն՝ Ա. Պալյան։ Կահիրե, 1903—1904, 16 էջ։

Լրարեր։ Լրագիր։ Տեր և տնօրեն՝ Գրիգոր Սաֆարյան։ Աղեքսանդրիա, 1903։ 1901 թ. լույս են տեսել նաև մի քանի համարներ խմորատիպ, իսկ 1897 թ. էլ մի քանի համարներ՝ տպագիր։

Պարտեզ։ Շաբաթական հանգես, գրական, գիտական և մանկավարժական։ Խմբագիր-տնօրեն՝ Միհրան Ասքանազ։ Աղեքսանդրիա, 1903—1904, 16 էջ։

Փեթակ։ Ազգային, գրական, քաղաքական և գավեշտական շաբաթաթերթ։ Խմբագիրներ՝ Ս. Չյոմլեքճյան և Ս. Թյուֆենքճյան։ Աղեքսանդրիա, 1903, 16 էջ։

Լուսաբեր։ Եռօրյա լրագիր ազգային, քաղաքական, ընտանեկան և գրական։ Խմբագիր՝ Վահան Քյուրքճյան։ Կահիրե, 1904—1908։ (1908 թ. միանում է «Արև»-ին և կոչվում է «Լուսաբեր — Արև»)։

Հորիզոն։ Շաբաթաթերթ։ Խմբագիր-տնօրեն՝ Կ. Փաշայան, ապա՝ Արտավազդ Հանրմյան և Հակոբ Ասատրյան։ Կահիրե, 1904—1906, 16 էջ։

Շիրակ։ Գրական և ընկերական ամսաթերթ։ Խմբագիրներ՝ Վահան Թեքեյան և Միքայել Կյուրճյան։ Աղեքսանդրիա, 1905—1909, 80 էջ։ Կահիրե, 1906—1907։ Խմբագիր՝ Ա. Արփիարյան։ 1909 թ. փետրվարից «Շիրակ»-ը դարձել է շաբաթաթերթ հանդես դրական և քաղաքական և հրատարակվել է Կ. Պոլսում։ Այս շրջանում «Շիրակ»-ը խմբագրել է նորից Վահան Թեքեյանը։

Սիսվան։ Ամսաթերթ ազգային, գրական, բանասիրական։ Խմբագիրներ՝ Սմբատ Բյուրատ և Երվ. Սրմաքեշխանլյան (Երուխան)։ Աղեքսանդրիա, 1905, 32 էջ։

Օրենք։ Շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Երվ. Օտյան։ Աղեքսանդրիա, 1905, 4 էջ։

Թերթիկ։ Ամենօրյա լրագիր։ Խմբագիր-տնօրեն՝ Երվ. Օտյան։ Աղեքսանդրիա, 1906, 4 էջ։

Կռակ։ Շաբաթաթերթ։ Խմբագիրներ՝ Երվ. Օտյան և Բարսեղ Շահբազ։ Աղեքսանդրիա, 1906։

Նոր ժամանակներ։ Շաբաթաթերթ քաղաքական և գրական։ Խմբագիր՝ Վահան Թեքեյան։ Կահիրե, 1906, 16 էջ։

Արև։ Օրաթերթ ազգային, գրական և քաղաքական։ Խմբագիր-տնօրեն՝ Երվ. Օտյան, հետագայում՝ Վահան Թեքեյան, Հովհ. Հակոբյան, Հովհ. Պողոսյան և ուրիշներ։ Կահիրե, 1907—1908։ Աղեքսանդրիա, 1915—1924։ Կահիրե, 1924—1965, 4 էջ։ «Արև»-ը 1908 թ. միացվել է «Լուսաբեր»-ին և կոչվել է «Լուսաբեր-Արև», իսկ 1912 թ. № 42-ից վերանվանվել է «Լուսաբեր»։

Ավել։ Գավեշտական կիսամսյա։ Խմբագիր՝ Վ. Քյուչյուքյան։ Կահիրե, 1908—1909, 16 էջ։

Լուսաբեր–Արև։ Ազգային-քաղաքական լրագիր։ Խմբագիրներ՝ Վահան Քյուրքճյան և Լևոն Մկրտչյան։ Կահիրե, 1908—1912, 4 էջ։

Ստրակ։ Քաղաքական և գրական, կիսամսյա։ Խմբագիր-անօրեն՝ Բարսեղ Շահբազ։ Աղեքսանդրիա, 1908, 4 էջ։

Նշտրակ։ Պարբերական հրատարակություն։ Տեր և տնօրեն՝ Երվ. Քերեստեճյան։ Խմբագիր՝ Հրանդ Ալատտին։ Կահիրե, 1908։

Լուսին։ Հանդես։ Հրատարակություն Գալբստյան պատանեկան միության։ Խմբագիրներ՝

Մարտ. Պալայան, Հ. Թյուրապյան, Ա. Սամլյան և Ն. Գևորգյան։ Կահիրե, 1909—1910։

Անցած-դարձածներ։ Պարբերաթերթ։ Հրատարակիչ՝ Երվ. Քերեստեճյան։ Կահիրե, 1911—1912։

Մալե՝ Բայց ոչ Պելեշ (կճաթեցնե խնդալեն. բայց չի փրցներ խածնելեն)։ Երգիծական շաբաթաթերթ կամ եռօրյա զավեշտաթերթ։ Խմբագիր՝ Գրիգոր Համբիկյան (Բոնշոն)։ Կահիրե, 1911—1912, 16 էջ։

Հոսանք։ Շաբաթաթերթ։ Տեր և խմբագիր՝ Սուրեն Պարթևյան։ Կահիրե, 1912, 16 էջ։

Հիշատակարան-տարեգիրք։ Վահան Զարդարյանի։ (Վարժարդված 1912 թ. Սահակ-Մեսրոպյան մրցանակով)։ Կահիրե, 1912—1939։

Հուսարեր։ Օրաթերթ։ Խմբագիրներ՝ նախ Սուրեն Պարթևյան, ապա՝ Վ. Նավասարդյան և ուրիշներ։ Կահիրե, 1912—1965, 4 էջ։

Միություն։ Ամսօրյա պաշտոնաթերթ Հայկ. բարեգործ. ընդհ. միության։ Խմբագիր՝ Վահան Մալեզյան։ Կահիրե, 1912—1928։ Փարիզ, 1929—1938, 16 էջ։

Գալուստյան միություն։ Կիսամսյա հրատարակություն Գալուստյան Ազգ. վարժ-ի ընթացավարտից միության։ Կահիրե, 1913, 32 էջ։

Եգիպտահայ տարեցույց։ Հրատարակիչ-խմբագիր՝ Սուրեն Պարթևյան։ Կահիրե, 1914, 1915 և 1916։

Ջահակիր։ Վեցամսյա գրական հանդես։ Հրատարակիչ-խմբագիր՝ Վարդան Գևորգյան։ Կահիրե, 1914, 110 էջ։ Եգիպտոսում 2 համար է միայն հրատարակվել, իսկ այլ գաղութներում հրատարակվել են մի քանի համարներ։

Արարատի մատենադարան։ Պարբերական։ Կահիրե, 1916—1917։

Սավառնակ։ Ամենուն շաբաթաթերթ։ Տեր և խմբագիր՝ Երվ. Մսրլյան։ Կահիրե, 1914—1965, 8 էջ։

Խարաշօ։ Շաբաթաթերթ երգիծական։ Աղեքսանդրիա, 1915։

Պրիսմակ։ Շաբաթաթերթ։ Աղեքսանդրիա, 1915։

Անապատի հուշարձան։ Գրական պարբերաթերթ։ Խմբագիր՝ Կարո Պալյան։ Կահիրե, 1916—1917։

Մժղուկ։ Երգիծարանական թերթ։ Խմբագիր՝ Յաֆարյան։ Կահիրե, 1917։

Տեղեկագիր հայկ. աղքատախնամ ընկերության։ Կահիրե, 1918, 1919 և 1920, 1933։ Որոշ տարիներ լույս է տեսել նաև ֆրանսերենով խառն։

Որբունի։ Ամսաթերթ։ Տեղեկատու հայ որբախնամ ընկերության։ Աղեքսանդրիա, 1919—1921, 16 էջ։

Հայ բուժակ։ Բժշկական և առողջապահական ամսաթերթ։ Խմբագիրներ՝ Մ. Կարակեոզյան և Հ. Թաշճյան։ Կ. Պոլիս և Աղեքսանդրիա, 1920—1924, 32 էջ։

Մարտիկ առա։ Ազգային երգիծաթերթ։ Հրատարակիչ՝ Վահան Զարդարյան։ Կահիրե, 1921, 4 էջ։

Ասեղ։ Երգիծական շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Վահան Գասապյան։ Աղեքսանդրիա, 1923։

Նոր շարժում։ Գրական, գեղարվեստական և գիտական հանդես։ Խմբագիր՝ Գուրգեն Մխիթարյան։ Կահիրե, 1923—1924, 16 էջ։

Մասիս։ Ամսաթերթ Ռամկ. հայ. ուս. միության։ Կահիրե, 1924—1925։

Արաքս։ Անկախ հայաթերթ-շաբաթաթերթ։ Հիմնադիր-խմբագիր՝ Արամ Ստեփանյան, ապա՝ Շավարշ Ստեփանյան։ Աղեքսանդրիա, 1925—1965, 4 էջ։

Կայծ։ Ամսագիր «Զարթոնք» երիտ. միության։ Աղեքսանդրիա, 1924, 16 և 32 էջերով։

Եգիպտահայ տարեցույց։ Հրատարակիչ-խմբագիր՝ Լևոն Աճեմյան։ Աղեքսանդրիա, 1925, Ա տարի, 1926, Բ տարի և հաջորդ տարիներ։

Հայկական սինեմա։ Պատկերազարդ երգիծաթերթ։ Արտոնատեր-ծաղրանկարիչ՝ Ալ. Սարուխան։ Խմբագիր-աշխատակից՝ Երվ. Օտյան։ Կահիրե, 1925—1926, 8 էջ։

Սֆինքս։ Քաղաքական անկախ շաբաթաթերթ։ Արտոնատեր-խմբագիր՝ Արամ Ստեփանյան։ Աղեքսանդրիա, 1925—1927։ Հետագայում հրատարակվել է Կահիրեում, խմբագրությամբ Հ. Ասլանյանի։

Փունջ։ Հայ և օտար գրականության մանկական շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Մ. Քարամյան, ապա՝ Լևոն Աճեմյան։ Աղեքսանդրիա, Կահիրե, 1925—1946, 16 էջ։

Արարա։ Անկախ հայաթերթ-շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Արամ Ստեփանյան։ Աղեքսանդրիա, 1926—1930, 6 էջ։

Հայ վարժարան։ Մանկավարժական ամսագիր։ Խմբագրական կազմ՝ Թագվորյան, Շեմս

(Հ. Սափրիչյան), բժշ. Թաշճյան։ Կահիրե, 1926, 16 էջ։

ՀՕԿ։ *Պարբերական պրակ ՀՕԿ-ի։ Կահիրե, 1926, 16 էջ։*

Լուսաբաց։ *Շաբաթաթերթ։ Կահիրե, 1927—1928, 4 էջ։*

Միտք ու մկան։ *Ամսաթերթ Պերպերյան վարժարանի երեց կարգերի։ Կահիրե, 1926—1929։ Շապիկը՝ տպագիր, էջերը՝ խմորատիպ։*

Հրեղեն սյուն։ *Հոգևոր պարբերաթերթ։ Հիմնադիր-խմբագիր՝ Բյուզանդ Գյեողյուպեյուքյան։ Կահիրե, 1927—1941, 16 էջ։*

Կայծակ։ *Մարզական ամսագիր։ Օրգան Հայ մարմնամարզական միության։ Արտոնատեր-խմբագիր՝ Թադեոս Գալֆայան։ Կահիրե, 1929։*

Լույս։ *Երգիծաթերթ։ Խմբագիր՝ Վարդան Ջագարյան։ Կահիրե, 1930, 4 էջ։*

Համասպրամ։ *Եգիպտահայ ամսագիր։ Հրատարակություն Հայկազյան միության։ Խմբագիրներ՝ Լևոն Բեյլիկյան և Հ. Էսեկյուլյան։ Կահիրե, 1930, 24 էջ։*

Ժամանակ-Ցեփլին։ *Ազգային և քաղաքական թերթ, երգիծական։ Խմբագիր՝ Երվանդ Մսըրլյան։ Կահիրե, 1931—1933։*

Ցեփլին։ *Ազգային և քաղաքական երգիծական շաբաթաթերթ։ Խմբագիր՝ Երվ. Մսրլյան։ Կահիրե, 1933, 4 էջ։*

Հայ դպրոց։ *Ամսագիր։ Մանկավարժական հրատարակություն հայ ուսանողական միության։ Կահիրե, 1933, 48 էջ։*

Զարթոնք։ *Գրական, գիտական և գեղարվեստական հավաքածու։ Խմբագիրներ՝ Մ. Պալայան, Մ. Պեյլերյան և Ծաղկունի։ Կահիրե, 1935—1937։*

Ազատ միտք։ *Շաբաթաթերթ քաղաքական, գրական և ընկերային։ Հիմնադիր-խմբագրապետ Արշակ Ալպոյաճյան։ Խմբագիրներ՝ Դավիթ Շահլամյան և Արշակունի Ալպոյաճյան։ Կահիրե, 1935—1937, 8 էջ։*

Համազգային տարեգիրք։ *Հրատարակություն «Համազգային» ընկերության։ Խմբագիր՝ Գուրգեն Մխիթարյան։ Կահիրե, 1936, Ա. տարի, 351 էջ։ Լույս է տեսել նաև 1937—1938 թթ.։ Հետագայում լույս է տեսել նաև Բեյրութում։*

Ամսօրյա տեղեկագիր։ *Հ. Բ. Ը. միության։ Կահիրե, 1937—1939։*

Արմավենի տարեգիրք։ *Հրատարակություն Գալուստյան Ազգ. վարժարանի շրջանավարտից միության։ Կահիրե, 1937—1938։*

Բանաստեղծին ձայնը։ *Պարբերագիրք։ Հրատարակիչ՝ Արշամ Տատրյան, Կահիրե, 1938։*

Գիր և արվեստ։ *Եգիպտահայ եռամսյա պարբերաթերթ, պատկերազարդ։ Հրատարակիչ՝ Գ. Գալֆա։ Խմբագիր՝ Քերոբե Կոստանդյան։ Կահիրե, 1938, 36 էջ։*

Գրասերի առաջնորդ։ *Հրատարակիչ՝ Ա. Ալպոյաճյան։ Կահիրե, 1938, 16 էջ։*

Հայ դպրոց։ *Մանկավարժական հանդես։ Հրատարակություն հայ ուսուցչական միության։ Խմբագրական կազմ։ Կահիրե, 1938, 80 էջ։*

Շողակաթ։ *Հրատարակություն հայ ուսանողական միության։ Կահիրե, 1938, 16 էջ*

Հազար ու մեկ գիտելիքներ։ *Պարբերական ժողովածու։ Հրատարակիչ՝ վերապատվ. Ս. Քոնսուլյան։ Կահիրե, 1938—1939։*

Դալարիք։ *Տեղեկատու ազգային վարժարանաց։ Պատկերազարդ ամսագիր։ Աղեքսանդրիա, 1939։*

Զարթոնք։ *Գիրք-հիշատակարան նախկին որբերու։ Հրատարակիչ-խմբագիր՝ Դավիթ Շահլամյան, Կահիրե, 1939—1941, 16 էջ։*

Ավետարանի ձայն։ *Ոչ-հարանվանական անկախ ամսաթերթ։ Աղեքսանդրիա, 1939—1947։*

Շարժում։ *Պարբերաթերթ։ Հրատարակություն հայ ուսանողական միության։ Կահիրե, 1941. 32 էջ։*

Էջեր հայ գրականութենեն։ *Պարբերագիրք։ Հրատարակություն հայ գրքի բարեկամների ընկերակցության։ Կահիրե, 1943։ Լույս է տեսել պրակ առ պրակ, գրական արձագանքներով։*

Կյանք և գիր։ *Գիրք-հիշատակարան հայ երիտասարդության։ Ամսագիր։ Հրատարակիչ՝ Դավիթ Շահլամյան։ Խմբագիրներ՝ Հ. Ժամկոչյան և Դ. Շահլամյան, 1948-ից՝ Վ. Գարտաշյան և Ս. Պալըքճյան։ Կահիրե, 1944—1950, 24 էջ։*

Աշխատանք։ *Գրական հավաքածու հայկ. ընթերցասրահի։ Երկամյա հրատարակություն։ Խմբագիրներ՝ Խ. Հովհաննիսյան և Մ. Պեյլերյան։ Կահիրե, 1944—1947, 24 էջ։*

Հուսաբեր. *Նույնանուն թերթի գրական-գեղարվեստական և գրական բաժին։ Ամսագիր։ Խմբագիր՝ Գուրգեն Մխիթարյան։ Կահիրե, 1944—1950, 24 էջ։*

Նոր արվեստ և մշակույթ։ Հայաստանյան ուղղությամբ պարբերաթերթ (գրականություն, գեղարվեստ, սինեմա, թատրոն, գիտություն և նորաձևություն)։ Հրատարակիչներ՝ Ս. Պալայան և Պ. Սիմոնյան։ Կահիրե, 1946—1947, 32 էջ։

Անդաստան հայ մտքի։ Պարբերագիրք։ Հրատարակիչ՝ Հայկ Ժամկոչյան։ Կահիրե, 1946—1948։

Ջահակիր։ Ավանդապահ համադրական և բանալրջական հառաջադիմության, քաղաքական, գրական և ընկերային։ Շաբաթաթերթ։ Տեր և խմբագիր՝ Հայկ Ժամկոչյան, հետագայում Սարգիս Պալայան։ Կահիրե, 1948—1965, 8 էջ։

Նոր Խիկար։ Երգիծաթերթ։ Խմբագիր՝ Կարինյան (Հայկ Ժամկոչյան)։ Կահիրե, 1949, 24 էջ։ Լույս է տեսել 2 համար փոքրածավալ։

Ուսանող։ Ամսագիր։ Կահիրե, 1949։

Մարզիկ։ Մարզական ամսաթերթ։ Հրատարակիչ-խմբագիր՝ Գրիգոր Գրլրճյան, Կահիրե, 1951—1952։

Ղուսումնարան, տարեգիրք։ Կահիրե, հրատ. վիեննական Մխիթարյան հայրերի, 1956, 138 էջ։ Նաև՝ 1957—1961։

Տեղեկատու։ Ամսաթերթ։ Հրատարակություն հայ բարեգործ. ընդհ. միության։ Խմբագիրներ՝ Հայկ Ժամկոչյան, Սիսակ Շալճյան և Գր. Պասմաճյան։ Կահիրե, 1962, 16 էջ։

Բանն Աստուծո։ Հոգևոր պարբերաթերթիկ։ Հրատարակիչ՝ Արա Սահակյան։ Կահիրե, 1960—1963, 24 էջ։ Լույս է տեսնում պրակ առ պրակ։

Դ. ՇԱՀԼԱՄՅԱՆ